ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ ՄՐՑԱՇԱՐ ԵՎ ԽԱՂ ՍԵԱՆՍ ԳՐՈՍՄԱՅՍՏԵՐՆԵՐԻ ՀԵՏ

16.04.2018 09:14

2018 թվականի ապրիլի 14-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում փաստաբանների միջև անց է կացվել շախմատի մրցաշար:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը, ողջունելով խաղի մասնակիցներին, նշել է, որ փաստաբանների պալատում պարբերաբար անց են կացվում շախմատի մրցաշարեր և փաստաբանների հետաքրքրությունը մեծ է այս սպորտածևի հանդեպ: Նա նկատել է, որ շախմատը միակ մարզածևն է, որտեղ բացառվում է բախտը բերելու գործոնը և սպորտսմենն ապավինում է միայն սեփական ինտելեկտին:

Մրցաշարը հանդիսավոր բացել, փաստաբաններին հաջողություն և լավ խաղ է մաղթել սպորտի վարպետ, շախմատիստուհի Արիանա Կաուլին:

Մրցաշարին աջակցել և համաժամանակյա խաղ են անցկացրել գրոսմայստերներ, օլիմպիական, Եվրոպայի և մի շարք այլ հեղինակավոր մրցաշարերի հաղթողներ, բազմակի չեմպիոններ Արտաշես Մինասյանն ու Գաբրիել Սարգսյանը:

Մրցաշարին մասնակցել է 37 փաստաբան: Այն անց է կացվել 7 պլյուս 5 վայրկյան հավելումով: Անց է կացվել 7 խաղափուլով՝ շվեյցարական մրցակարգով:

Առաջին մրցանակակիր է ճանաչվել Կարեն Մեժլումյանը (արտ.1844), երկրորդ պատվավոր տեղը զբաղեցրել է Սերգեյ Ամիրխանյանը, երրորդ տեղը գրավել է Աշոտ Շահմուրադյանը:

Առաջնությունը վարել է միջազգային կարգի մրցավար Վահագն Խաչատրյանը:

Մրցաշարի կազմակերպվել էր՝ Պալատի մարզամշակութային ակումբի համակարգող Վրեժ Խաչիկյանի ջանքերով:



ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀՀ ԴԱՏԱՎԱՐԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՀՀ ԴԱՏԱՎԱՐԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })